## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար կաբսանների վերանորոգման-պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

ք. Երևան

«05» հոկտեմբերի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Միմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով ընթացակարգի ներկայացված հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2017թ.-ի հոկտեմբերի 05-ին՝ ժամը 10:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Գնման սույն ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն |
|---|---|
| «Ավարաս-Յուս» ՍՊԸ | ք. Երևան, Քոչարյան 4/2 |
| «Քերմաէներգո» ՍՊԸ | ք. Երևան, Բագրատունյաց 22/3, բն. 105 |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հատաձա գնահատման համար ընդունելի:

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 «Ջերմաէներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.2 «Ամարաս-Ցուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (5-րդ չափաբաժնի մասով «Ամարաս-Ցուս» ՍՊԸ-ի կողմից Համակարգում կցված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարության (Հավելված 3) փոխարեն կցված է գնային առաջարկը (Հավելված 4), բայց, քանի որ մյուս չափաբաժինների մասով Համակարգում կցված է որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը (Հավելված 3), հանձնաժողովը 5-րդ չափաբաժնի մասով ևս հիմք է ընդունում նույն հավելվածը): «Ամարաս-Ցուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են լիցենզիա և ներդիր, սակայն «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով հրավերով լիցենզիա չի պահանջվել /նախատեսվել/:

*Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:*

**5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

5.1. «Ջերմաէներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

5.2 «Ամարաս-Ցուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ. հայտով ներկայացված է մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար, սակայն վճարման պահանջագրում նշված գումարը պակաս է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ հաշվարկվող հինգ տոկոսից:

Ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետով և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «Ամարաս-Ցուս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

*Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:*

**6. Մասնակիցների առաջարկած գներն են՝**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Ամարաս-Ցուս» ՍՊԸ | | | «Ջերմաէներգո» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Արտաշատ քաղաքի նստավայրի վարչական շենքի կաթսայի վերանորոգում | 1 615 833,33 | 323 166,67 | 1 939 000 | 1 770 000 | | 1 770 000 |
| 2 | ՀՀ Արարատի և Վայոց Ձորի | 581 666,67 | 116 333,33 | 698 000 | 520 000 | | 520 000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Մասիս քաղաքի նստավայրի վարչական շենքի կաթսայի վերանորոգում | | | | | | |
| 3 | ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Ապարան քաղաքի նստավայրի վարչական շենքի կաթսայի վերանորոգում | 1 493 333,33 | 298 666,67 | 1 792 000 | 977 000 | | 977 000 |
| 4 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի կաթսայի վերանորոգում | 1 498 333,33 | 299 666,67 | 1 798 000 | 1 710 000 | | 1 710 000 |
| 5 | Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի կաթսայի վերանորոգում | 1 575 000,00 | 315 000,00 | 1 890 000 | 989 000 | | 989 000 |

**7. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**
Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Ջերմաէներգո» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**
Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. հոկտեմբերի 11-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

**-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Սարգիս Արմենակյան

Կարեն Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան